Արձանագրություն N2

« ՎԲԿ-ԳՀՇՁԲ-24/02 » ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Ք.Վեդի, Գայի 2/30 2024-02-23-ին ժամը 17:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Խաչատրյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Հասմիկ Գաբրիելյան (ԳԱ)
Անդրանիկ Հակոբյան (ԳԱ)
Գևորգ Գաբրիելյան (ԲԱ)
Անուշիկ Մանուկյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Բազիկյան (ԳՀԱ)

1.Հայտերի բացման մասին

Սամվել Խաչատրյան

1.1 Հայտերի բացումը տեղի է ունեցել էլ. գնումների՝ armeps.am համակարգի միջոցով 23.02.2024թ.-ին, ժամը 17:45-ին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում մատակարարվող ծառայության ձեռքբերման գնման գինը, որը ներկայացված է ներքևում՝ ՀՀ դրամով:

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ են ներկայացրել թվով 2 կազմակերպություններ:

Հ / Հ	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ	Հասցե	Հեռախոս	Էլ. Փոստի հասցե
1	«ԷԿՈՊՐՈՏԵԿՏ» ՍՊԸ	00103286	ՀՀ, ք.Երևան, Նուբարաշենի խճուղի 20/1	095-89-84-80	ecoprotekt@rambler.ru
2	«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ	04719486	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մարգարայի խճ. 4/1	+374 77669080	ekovkh@gmail.com

Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր են համարվել վերոնշյալ 2 կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը՝ Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված պիտանի հայտեր:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը www.armeps.am համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

1.3 Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին.

Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

1.4 Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին.

Գնման ընթացակարգի շրջանակներում բողոքներ չեն եղել:

1.5 Հակաօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

2.Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են: Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված են «ԷԿՈՊՐՈՏԵԿՏ» ՍՊԸ-ի և «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը:

2.2 Գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ փաստաթղթերը կազմված են Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Այսպիսով, հայտ ներկայացրած մասնակիցների՝ «ԷԿՈՊՐՈՏԵԿՏ» ՍՊԸ-ի և «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի հայտերը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

3. Մասնակիցների առաջարկած գների մասին

3.1 Բավարար գնահատված Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ԷԿՈՊՐՈՏԵԿՏ» ՍՊԸ		«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ		Նախահաշվային գինը
		Առաջարկած գինն՝ առանց ԱԱՀ	Առաջարկած գինն՝ ընդհանուր ներառյալ ԱԱՀ	Առաջարկած գինն՝ առանց ԱԱՀ	Առաջարկած գինն՝ ընդհանուր ներառյալ ԱԱՀ	
1	Բժշկական թափոնների և դեղորայքի ոչնչացման ծառայություններ	1 300 000	1 560 000	**1 233 333.33**	**1 480 000**	**1 560 000**

3.2 Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

3.3 Պատվիրատի և (կամ) գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի/իցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու վերաբերյալ որոշում չի կայացվել.

3.4 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան և գնահատվում են բավարար: Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտերով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները չեն գերազանցում գնման գինը: Այսպիսով

Հանձնաժողովը որոշեց.

- Հիմք ընդունելով Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, «ՎԲԿ-ԳՀԾՁԲ-24/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է համարվում «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և բավարար գնահատված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4"Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

4.1 Հիմք ընդունելով հայտ ներկայացրած և բավարար գնահատված Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ԳՀԾՁԲ-24/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Չափաբաժնի համարը	Հայտի գնահատականը
1-ին տեղ	«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ	1-ին	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 4.1-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է. Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ «ՎԲԿ-ԳՀԾՁԲ-24/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է համարվում «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5" «ՎԲԿ-ԳՀԾՁԲ-24/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

5.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, և անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

5.2 Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

6" Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

ՎԲԿ-ԳՀԾՁԲ-24/02 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը, ժամը 16:00-ին Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շենքում ՝ Արարատի մարզ ք.Վեդի Գայի 2/30:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Հ.Գաբրիելյան**

_____ **Ա.Հակոբյան**

_____ **Ա.Մանուկյան**

_____ **Գ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**